

***Հայաստանի Հանրապետության մեծարգո վարչապետ,***

***Մրբազան Հայր***

***հարգելի գործընկերներ, հյուրեր***

Շնորհակալություն եմ հայտնում ինձ ձայն տրամադրելու համար:

Ակադեմիայի ղեկավարությունը հաճախ է մեղադրում, որ ակադեմիայի տարեկան հաշվետու ժողովներում բազմիցս ինձ ձայն է տրվել, սակայն հրաժարվել եմ ելույթից: Այս անգամ կօգտվեմ ընձեռնված հնարավորությունից:

Համոզված չեմ, որ հանրապետության վարչապետի ներկայությամբ, այսքան մեծ լսարանի առջև արժե ներքին «խոհանոցին» վերաբերող հարցերը դարձնել քննարկման առարկա: Ինչևէ, այսօր կփորձեմ փոքր-ինչ շեղվել այս մոտեցումից և կաշխատեմ այս հարգարժան լսարանում լինել անկեղծ և, հնարավորության սահմաններում, անկաշկանդ և կոռեկտ:

Անվիճելի է, որ ՀՀ կառավարության գիտության ոլորտում այսօրվա վարած կառուցողական քաղաքականության արդյունքում, չնայած պետական ֆինանսավորման ոչ այնքան բարենպաստ պայմաններին, ՀՀ գիտական կազմակերպություններում և, հատկապես, ակադեմիական ինստիտուտներում աշխատում են բազմաթիվ վաստակաշատ գիտնականներ, ովքեր ամեն տարի ակնհայտորեն բարելավում են իրենց աշխատանքի արդյունավետության ցուցանիշները՝ բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում տպագրված հոդվածների և՛ քանակը, և՛ որակը: Սա, անկասկած, ուրախալի է բոլորիս համար:

Այսուհանդերձ, իմ կարծիքով, ակադեմիայի տարեկան ժողովը նաև լավագույն առիթը պետք է հանդիսանա կառույցի մեր ժամանակների մարտահրավերներին համապատասխան նոր ռազմավարության մշակման և հեռանկարային ծրագրերի ներկայացման համար:

Մանրամասն լսելով ՀՀ ԳԱԱ նախագահի այսօրվա ելույթը՝ ինձ համար առաջացան մի շարք հարցեր, որոնց պատասխանը, կարծում եմ, կարելի է ստանալ ավելի ուշ՝ անձնական հանդիպումների ժամանակ:

Մասնավորապես՝ ցանկալի է իմանալ.

- հաշվետու տարում ակադեմիայի հաջողությունների հետ մեկտեղ, ի՞նչը չի հաջողվել իրականացնել, որո՞նք են անհաջողության պատճառները,

- որո՞նք են ակադեմիայի այսօրվա և առաջիկա գոնե 2-3 տարիների ամենալուրջ մարտահրավերները, որո՞նք են դրանք լուծելու ճանապարհները,

- օպտիմալ է, արդյոք, ակադեմիայի այսօրվա կառուցվածքը, թե՞ այն կատարելագործման կարիք ունի,

- չարժե՞, արդյոք, առաջիկա 2-3 տարիների ընթացքում շարունակել ինստիտուտների պլանավորված օպտիմալացումը: Համակարգի կառավարման և ռեսուրսների, ընդ որում՝ ոչ միայն ֆինանսական, այլև՝ մասնագիտական, օգտագործման արդյունավետության տեսանկյունից արդյո՞ք նպատակահարմար չէ շարունակել ուղղվածությամբ մոտ ինստիտուտների միավորումը,

- ժամանակը չէ՞, արդյոք, հրաժարվել ֆինանսական միջոցների հավասար բաշխման սկզբունքից և անցնել ինստիտուտների բյուջետային ֆինանսավորման տարբերակված մոտեցման կիրառմանը: Կարծում եմ, որ յուրաքանչյուր գիտնական և կազմակերպության տնօրեն պետք է համոզված լինի, որ պետության կողմից ֆինանսական միջոցներ հատկացնելիս հաշվի են առնվելու ինչպես կազմակերպության ուղղվածությունը, յուրաքանչյուրի աշխատանքի արդյունավետությունը, այնպես էլ՝ կազմակերպության ղեկավարի կառավարելու հմտությունը և այլ չափանիշներ,

- չէ՞ք կարծում, որ որոշակի փոփոխության անհրաժեշտություն կա նաև ակադեմիայի կառավարման համակարգում: Քանի որ ակադեմիան պետական կառույց է և հիմնականում ֆինանսավորվում է պետական բյուջեից, ապա ակադեմիայի կառավարման մարմիններում, մասնավորապես՝ նախագահությունում, պետք է ընդգրկված լինի գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտում պետական լիազոր մարմնի ներկայացուցիչը: Իմ համոզմամբ, դա կծառայի մեր ընդհանուր գործին՝ մեր համատեղ աշխատանքը դարձնելով ավելի ներդաշնակ և, հետևաբար, ավելի արդյունավետ: Հաշվի առնելով հատկապես վերջին զարգացումները՝ ակադեմիան պետք է ակտիվորեն զբաղվի մեր երկրի պաշտպանության խնդիրներով, և անհրաժեշտ է ԳԱԱ նախագահության կազմում ընգրկել նաև պաշտպանության նախարարության ներկայացուցչին, ինչպես նաև՝ ունենալ առանձին ֆիզիկա-տեխնիկական կամ հատուկ ծրագրերի բաժանմունք:

Այժմ թույլ տվեք անցնել շատերի համար խիստ կարևոր մի խնդրի քննարկմանը նույնպես:

Բազմաթիվ գիտաշխատողների հետ զրույցների արդյունքում կցանկանայի հնչեցնել շատերի կարծիքն այն մասին, որ ակադեմիայի ընտրությունների ժամանակ հավակնորդների առջև պետք է դրվեն կոշտ ֆիլտրեր, որպեսզի որևէ կասկածելի գիտական վարկանիշ ունեցող անձ անգամ չմտածի ակադեմիկոս դառնալու մասին: «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքում «սահմանված» է, թե ովքեր կարող են ընտրվել ակադեմիկոսներ և թղթակից անդամներ: Ավելորդ է ասել, որ հավակնորդների առջև դրված չափորոշիչները և չափանիշները պետք է լինեն իրոք չափելի, ընկալելի և ընդունելի ցանկացած մարդու, հարկատուի համար և անպայման պետք է հաստատվեն ՀՀ կառավարության կողմից:

Խիստ կարևոր է նաև ակադեմիայի երիտասարդացման խնդիրը: Կարծում եմ՝ հետագա ընտրությունների ժամանակ անհրաժեշտ է հավակնորդների առջև դնել որոշակի տարիքային սահմանափակումներ: Ես ներողություն եմ խնդրում իմ գործընկերներից, բայց չեմ կարող չհարցնել, թե իր ակտիվ գիտական գործունեության շրջանն անցած 74-75 տարեկան գիտնականից ի՞նչ ենք սկսկալում ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ ընտրելիս:

Մի քանի խոսք ակադեմիայի արտասահմանյան անդամների մասին: Բարձր վարկանիշ ունեցող արտասահմանյան գիտնականների ներգրավումը մեր ակադեմիայի աշխատանքներում իրոք գովելի է և, անշուշտ, օգտակար: Ես շնորհակալություն եմ հայտնում այս մարդկանց իրենց հայրենանվեր աշխատանքի համար: Մակայն անհասկանալի է, թե ինչպես է մեր օտարերկրացի գործընկերների մի մասն արժանացել այս պատվին՝ չունենալով առանձնապես բարձր վարկանիշ և, գրեթե չմասնակցելով ակադեմիայի աշխատանքներին: Քանի որ մեր արտասահմանցի գործընկեր-հավակնորդները ներկայացնում են այն երկրները, որոնք ունեն առաջնակարգ գիտություն, ապա կարծում եմ, որ նրանց առջև դրվելիք պահանջները պետք է ավելի խիստ լինեն, քան՝ հայաստանյան հավակնորդներինը:

Ուզում եմ անդրադառնալ մի հարցի ևս, որն ունի ռազմավարական կարևորության նշանակություն Հայաստանի Հանրապետության համար և առանձնակի հնչեղություն այս ամսվա սկզբին տեղի ունեցած իրադարձությունների ֆոնի վրա:

Խոսքը վերաբերում է ՀՀ ռազմարդյունաբերական համալիր զարգացմանը: Ինչպես գիտեք, 2015 թ. ընդունվել է «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքը, որով ի

թիվս այլ հարցերի սահմանված է նաև տվյալ բնագավառում ՀՀ գիտության ոլորտում իրականացվելիք աշխատանքների շրջանակը: Որպես այդ օրենքից բխող միջոցառում ՀՀ Նախագահի 2015 թ. դեկտեմբերի 29-ի ՆՀ-893-Ն հրամանագրով ստեղծվել է ՀՀ ռազմարդյունաբերական հանձնաժողով՝ ՀՀ վարչապետի գլխավորությամբ: Այդ հանձնաժողովի խնդիրների մեջ են մտնում, մասնավորապես, ռազմարդյունաբերական բնագավառի արդյունավետության բարձրացմանն ուղղված գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման հարցերը: Մինևույն ժամանակ ՀՀ վարչապետի 2016 թվականի մարտի 23-ի N 199-Ա որոշումով ստեղծվել է Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական հանձնաժողովին կից ռազմատեխնիկական և գիտատեխնիկական խորհուրդ՝ Գիտության պետական կոմիտեի նախագահի նախագահությամբ: Խորհուրդը կոչված է քննարկելու ռազմարդյունաբերական համալիրին վերաբերող գիտական և գիտատեխնիկական հարցերը և դրանք ներկայացնելու ՀՀ ռազմարդյունաբերական հանձնաժողովին:

Այս առումով կոչ են անում ՀՀ ռազմարդյունաբերական հանձնաժողովին կից ռազմատեխնիկական և գիտատեխնիկական խորհրդին ներկայացնել ռազմարդյունաբերական համալիրին վերաբերող ծրագրեր:

Ուզում են նաև հայտարարել, որ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ն նախատեսում է հայտարարել մրցույթ՝ երկակի նշանակություն ունեցող աշխատանքներ իրականացնող գիտահետազոտական լաբորատորիաների ֆինանսավորման համար: Եվ, երկրորդ՝ պետական բյուջեի նպատակային-ծրագրային ֆինանսավորումը նույնպես պետք է ուղղված լինի հիմնականում այդպիսի աշխատանքների իրականացմանը: Ես Ձեզ հորդորում եմ ակտիվորեն մասնակցել նշված աշխատանքներին ու մրցույթներին:

Այսօր հնչեցված առաջարկությունների շարքը կարելի է մեծացնել: Սակայն, կարծում եմ, առայժմ կսահմանափակվենք այսքանով:

Վերջում կցանկանայի մեկ անգամ ևս ընդգծել, որ այսօրվա ելույթիս նպատակը մեր ազգային ակադեմիան ավելի ուժեղ և ավելի հստակ աշխատող կառույց տեսնելն է:

Թույլ տվեք մեկ անգամ ևս հայտնել իմ խորին շնորհակալությունը՝ տրամադրված ժամանակի համար, և ցանկանալ մեր ակադեմիային հետագա հաջողություններ: